ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Անդրանիկ Եսայան, Տավուշ գավառը XVII դ. - XVIII դ. առաջին քառորդին (պատմաժողովրդագրական ուսումնասիրություն), Երևան, 2024, 196 էջ + քարտեզ:

2024 թ. լույս տեսավ ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի միջին դարերի պատմության բաժնի կրտսեր գիտաշխատող Անդրանիկ Արարատի Եսայանի հեղինակած «Տավուշ գավառը XVII դ.-XVIII դ. առաջին քառորդին (պատմաժողովրդագրական ուսումնասիրություն)» մենագրությունը: Գրքի

խմբագիրն է պատմական գիտությունների թեկնածու Գոռ Երանյանը: Այն լույս է ընծայվել ԳԱԱ պատմության ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ ու Գալուստ Գյուլբենկյան հիմնադրամի ֆինանսական աջակցությամբ:

Վերջին տասնամյակներին հայոց պատմության մի շարք պատմաշրջաններ ու բնագավառներ զգալի չափով մատնվել են անուշադրության: Մասնավորապես, այն պատմափուլը, որը համաշխարհային պատմագիտության մեջ բավականին ընդունված է 1500-1800 թվականներով առանձնացնել որպես վաղ արդի ժամանակաշրջան, իսկ հայոց պատմության ավանդական ընկալմամբ ներառում է ուշ միջնադարն ու նոր դարաշրջանի առաջին 150 տարիները, բավականին քիչ է

ուսումնասիրվել: Չնայած այդ ուղղությամբ կատարվել են արժեքավոր որոշ ուսումնասիրություններ, սակայն ակնհայտ է, որ առկա են մեծ բացեր: Դրա վկայությունն է այն հանգամանքը, որ այս պատմափուլին վերաբերող բազմաթիվ հիմնախնդիրների վերաբերյալ վերջին ուսումնասիրությունները կատարվել են ավելի քան կես դար առաջ:

Վերոնշյալ երեք հարյուր տարիների ընթացքում Հայաստանը բաժանված էր երկու մրցակցող կայսրությունների միջև, ինչը սկզբունքորեն հեղաբեկեց հայության կյանքը՝ խորագույն ազդեցություն ունենալով կյանքի բոլոր բնագավառներում: Դժվար է գերագնահատել այն փոփոխությունների նշանակությունը, որ այդ ժամանակ տեղի ունեցան ժողովրդագրության ասպարեզում: Հենց այս շրջանի շատ իրադարձություններ Հայաստանի մի շարք շրջաններում հայերի հարաբերական փոքրամասնություն դառնալու ճանապարհ հարթեցին: Հայերի բռնագաղթն ու արտագաղթն ուղեկցվում էին այլ էթնիկ տարրերի զանգվածային ներհոսքով: Այս իրողությունը դիմաշրջեց ոչ միայն Հայաստանի քաղաքական, այլև տնտեսական ու սոցիալական պատմությունը, հսկայական ազդեցություն ունեցավ նաև այլ բնագավառներում:

Այս պատմաշրջանը, հատկապես հաջորդող ժամանակաշրջանների համեմատ, աչքի է ընկնում սկզբնաղբյուրների սակավությամբ: Եթե այս նույն ժամանակաշրջանի եվրոպական մի շարք պետությունների պարագայում առկա է արխիվային զանգվածային սկզբնաղբյուրների առատություն, ինչը հնարավորություն է տալիս խորքային կերպով ուսումնասիրել, օրինակ, առօրեականության պատմությունը, ապա Հայաստանի դեպքում նման ծավալի վավերագրական աղբյուր-

ներ չկան: Սա առաջ է բերել մեծ դժվարություններ, ինչի հետևանքով շատ հետազոտողներ խուսափել են անդրադառնալ կնճռոտ ու դժվար հետազոտելի թվացող բազմաթիվ խնդիրների: Չնայած վերջին տասնամյակներին կատարվել են շոշափելի աշխատանքներ Հայաստանի պատմական ժողովրդագրության ուսումնասիրության ուղղությամբ, սակայն դրանք դեռևս հնարավորություն չեն տալիս պարզելու ուշ միջնադարի ու նոր շրջանի ժողովրդագրական կացությունը գավառների (շատ հաճախ նույնիսկ նահանգների) մակարդակով: Հենց այդպիսի դժվար, համառ ու տևական աշխատանք պահանջող հետազոտություն է կարողացել իրականացնել գրախոսվող մենագրության հեղինակը:

«Տավուշ գավառը XVII դ.-XVIII դ. առաջին քառորդին» ուսումնասիրությունը բաղկացած է առաջաբանից, չորս գլուխներից, վերջաբանից, հավելվածից, օգտագործված սկզբնաղբյուրների և գրականության ցանկից, անգլերեն ամփոփումից ու անվանացանկերից:

Առաջին գլխում Ա. Եսայանն անդրադառնում է Տավուշ գավառում պարսկա-օսմանյան պատերազմների հետևանքներին: Ուշարժան է հյուսիսարևելյան Հայաստանում օտար էթնիկ տարրերի բնակեցման ներկայացումը: Հեղինակը խոսում է նաև Տավուշ-Շամշադին տեղանունների նույնացման հարցի մասին, ինչը ենթադրելիորեն մեծ հետաքրքրություն է առաջացնելու ընթերցող լայն հանրության մոտ:

Երկրորդ գլուխն ընդգրկում է 1606-1725 թվականները, երբ Տավուշ գավառը գտնվում էր Սեֆյան Իրանի կազմում: Այստեղ ներկայացված է Տավուշի մելիքությունը: Եթե նույն շրջանում Արցախի մելիքությունների վերաբերյալ կան ուսում-

նասիրություններ ու դրանք բավականին հայտնի են, ապա Տավուշի մելիքության պատմության լուսաբանումը սույն մենագրության ամենաարժեքավոր կողմերից է: Այս խնդրի հետ կապված հիշատակման է արժանի նույն հեղինակի XVII դարում ընդհանրապես հյուսիսարևելյան Հայաստանում գոյություն ունեցած մելիքություններին նվիրված հոդվածը (Ա. Եսայան, Հյուսիսարևելյան Հայաստանի մելիքությունները XVII դարում, Բանբեր Մատենադարանի, 2020, թիվ 29, էջ 388-400): Չնայած այս մելիքություններն անհամեմատ թույլ էին Արցախում գոյություն ունեցածներից, սակայն սակավաղբյուր տեղեկությունների հիման վրա դրանց պատմության վերակազմությունն օգնում է ավելի համակողմանի պատկերացում կազմելու այս տարածաշրջանի քաղաքական պատմության վերաբերյալ:

Անկարելի է չհիշատակել Տավուշ գավառի հոգևոր-մշակութային կյանքին նվիրված ենթագլուխը: Այստեղ քննվում է Տավուշի թեմի գործունեությունը, արժևորվում մշակութային կարևոր ձեռքբերումները:

Երրորդ գլխում պարզաբանվում է, թե հյուսիսարևելյան Հայաստանում ինչպիսի հետևանքներ ունեցավ Սեֆյան Իրանի թուլացումը: Խոսվում է XVII դ. վերջի-XVIII դ. առաջին քառորդի ռազմաքաղաքական ծալքերի, այստեղ լեզգիների արշավանքների ու օսմանյան նվաճողական քաղաքականության մասին: Հենց վերջին հանգամանքն էլ թուրքերին թույլ թվեց Գանձակ-Ղարաբաղի էյալեթում անցկացնել աշխարհագիր, որի մանրակրկիտ քննությանն է նվիրված մենագրության չորրորդ գլուխը: Այստեղ ներկայացվում են Թավուս (Տավուշ) նահիյեի հայկական ու մուսուլմանական բնակչություն

ունեցող բնակավայրերը, լքված գյուղերը, Ախընջայի (Ախնջի) նահիյեն, Հասանսուի նահիյեն (նաև մահմեդական բնակչությունը), անմարդաբնակ գյուղերը, Ասրիկ և Յալ նահիյեն: Այս գլուխը, իր հանգամանալի վերլուծությամբ, մենագրության անժխտելի արժանիքներից է: Հենց այս աշխարհագրին են վերաբերում նաև հավելվածները, որտեղ ներկայացված են վերոնշյալ նահիյեների գյուղերը՝ հարկատուների քանակով, ազգությամբ հայ հարկատուների ցուցակները: Հավելվածի երրորդ մասը ինքը՝ բնագիրն է, որը կարևոր է օգտագործված սկզբնաղբյուրի հավաստիությունը ի ցույց դնելու տեսանկյունից:

Մենագրությունը շահեկանորեն հարստացնում է Ա. Եսայանի հեղինակած «Տավուշ գավառն ըստ օսմանյան 1727 թ. «Գանձակ-Ղարաբաղի էյալեթի ընդարձակ դաֆթար»-ի» քարտեզը:

Աշխատանքն ընդհանուր առմամբ հաջողված է, սակայն զերծ չէ թերություններից: Չնայած սկզբնաղբյուրների սակավությանը, թերևս պետք էր ջանալ ավելի ընդարձակել երկրորդ գլխի առաջին ենթագլուխը, որը զբաղեցնում է մեկ էջից փոքր ինչ ավելի ծավալ: Կան վրիպակներ, օրինակ՝ բովանդակության մեջ երկրորդ գլխի վերնագրում գրված է. «Տավուշ գավառը Սեֆյան Իրանի կազմում (1606-1725) թթ.»: Ակնհայտ է, որ «թթ.»-ն պետք է լիներ փակագծերի ներսում: Ի դեպ, արդեն գլխի վերնագրում «թթ.»-ն ընդհանրապես բացակայում է:

Այսպիսով, Անդրանիկ Եսայանին հաջողվել է ներկայացնել Տավուշ գավառի քննված շրջանի պատմությունը (ոչ միայն ժողովրդագրությունը)՝ դիտարկելով այն տարա-

ծաշրջանային իրադարձությունների համատեքստում:

Հետազոտության արդիականությունը կայանում է նաև նրանում, որ ինչպես նշում է հեղինակը (էջ 11-12)՝ պատմության քաղաքականացման հետևանքով ադրբեջանցի պատմաբանները փորձում են հայերին տարածաշրջանում ներկայացնել լոկ որպես Ռուսական կայսրության կողմից XIX դարում վերաբնակեցված ժողովուրդ: Կեղծարարությունների պատասխանը, անշուշտ, պետք է լինեն ոչ թե հակադարձ քաղաքական շարադրանքները, այլ սույն մենագրության պես անկողմնակալ ուսումնասիրությունները: Նաև հենց այս առումով նման աշխատանքները պետք է թարգմանել անգլերեն ու այլ օտար լեզուներով: Ա. Եսայանի հետազոտության պարագայում պետք է արձանագրել, որ այդ ուղղությամբ արդեն իսկ գործադրվում են ջանքեր ու առաջիկայում նախատեսվում է գրախոսվող մենագրության լույս ընծայումն անգլերենով:

Տիգրան Հ. Ղանալանյան
ԵՊՀ, հայոց պատմության ամբիոն, պ.գ.թ.
tghanalanyan@ysu.am
ID 0009-0009-4231-9216
DOI:10.59523/1829-4596.2025.2(31)-228